Շրջակա միջավայրի նախարարության
գլխավոր քարտուղար պարոն Գրիգոր Գույանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողների անունը, ազգանունը.**
   Ոսկեհատ Իսախանյան
   Քրիստինե Խաչատրյան
2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կլիմայական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
   Միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետ
3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Այցելություն Թաիլանդի Թագավորություն՝ 2023 թվականի 20-24 հունիսի.
4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Ասիական զարգացման բանկ (ADB)
5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Տարածաշրջանային աշխատաժողովի նպատակն էր բարձրացնել ֆինանսների, բանկերի, էկոնոմիկայի, պլանավորման, շրջակա միջավայրի և արտակարգ իրավիճակների ոլորտների պետական պաշտոնյաների միջև փոխըմբռնումը, քննարկել պետական և մասնավոր ներդրումներին առնչվող որոշումների կայացման համար կլիմայի և աղետների ռիսկերի մասին տեղեկատվության կարևորության հետ կապված հարցերը:

   Աշխատաժողովը յուրահատուկ հարթակ էր կլիմայի փոփոխության դեմ պայքարող տարբեր երկրների հարմարվողականության պլանավորման վերաբերյալ համագործակցային ցանցի ձևավորման և երկրների ձեռքբերումներն ու անցած ճանապարհը ներկայացնելու և առաջիկա մարտահրավերներին դիմակայելու հնարավոր ուղիները գտնելու համար: Այն առավելապես միտված էր կլիմայի հարմարվողականության ծրագրերում պետական և մասնավոր ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման բազմակողմանի ասպեկտների շուրջ քննարկումներ ծավալելուն, վեր հանելու առկա բացերը և մասնակիցներին իրազեկել մասնավոր հատվածի ներդրումներն ուղղորդելու հնարավորություններին՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն

կարճաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների/սցենարների, գլոբալ և տեղական մակարդակներում միտումների վերաբերյալ :

Հանդիպմանը մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Մոնղոլիայի, Բութանի, Նեպալի, Թաիլանդի Թագավորության, Ֆիջիի և Տոնգայի Թագավորության, ԱԶԲ-ի տարածաշրջանային ներկայացուցիչներ, փորձագետներ:

Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև ֆինանսների նախարարության և կենտրոնական բանկի ներկայացուցիչները:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

- Կլիմայի և աղետների ռիսկի գնահատման դերը ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման հարցում,
- կլիմայի և աղետների ռիսկերի մասին տեղեկատվության ազդեցությունների գնահատում տարբեր ոլորտների և ներդրումային պորտֆելների վրա,
- ռիսկերի ըմբռնում և որոշումների կայացման տարբեր գործընթացներում դրանց լիարժեք կիրառելու կարևորություն,
- ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության կարևորությունը Ասիայի և Խաղաղ օվկիանոսյան երկրների դիմակայուն ապագայի համար ներդրումներ կատարելու հարցում,
- բաց կոդով կլիմայի և բնական աղետների տվյալների օգտագործում,
- կլիմայի և աղետների ռիսկերի գնահատման գործիքներ,
- կլիմայի և աղետների ռիսկերի գնահատման ազգային գործիքներ,
- ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության և ընբռնելու համար առկա գործիքների բացահայտում՝ հիմնվելով առկա կարողությունների, ռեսուրսների և տարածաշրջանային առանձնահատկությունների վրա,
- կլիմայական կանխատեսումների «ClimoCast» գործիքի օգտագործման ուղեցույցի և «SATARK»՝ ռիսկերի կառավարման վաղ ազդարարման համակարգի ներկայացում,
- կլիմայական ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության օգտագործումը երկարաժամկետ պլանավորման մեջ և ներդրումների պաշտպանության հարցում,
- պետական և մասնավոր հատվածի ներդրումները կլիմայի և աղետների ռիսկերի համատեքստում,
- մասնավոր հատվածի ներդրումների կլիմայական դիմակայունության բարձրացմանը ուղղորդելու հնարավորությունների բացահայտում:

7. **Հանդիպումները, ելույթները.**

Աշխատաժողովի ընթացքում Ոսկեհատ Իսախանյանը ներկայացրել է Հայաստանի Հանրապետության աղետների ռիսկերի կառավարման ոլորտում առկա իրավական և ինստիտուցիոնալ շրջանակները, օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ Հայաստանում կատարված և նախագծային փուլում գտնվող աշխատանքները

Անդրադարձ է կատարվել աղետների ռիսկերի կառավարման նոր ռազմավարության մեջ կլիմայական աղետների գնահատման վերաբերյալ հստակ գործողությունների ընդգրկմանը:

Հանդիպման ընթացքում յուրաքանչյուր նստաշրջանի ժամանակ տեղի են ունեցել խմբային աշխատանքներ, ինչպես նաև խնդրո առարկա աշխատաժողովի թեմային առնչվող էլեկտրոնային հարցումներ (Mentimeter): Ներկայացվել է «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի և Փարիզյան համաձայնագրի պահանջների և դրույթների կատարման միջգերատեսչական համակարգման խորհրդի ներքո գործող ֆինանսական հարցերով աշխատանքային խմբի դերը կլիմայական և ֆինանսական ռիսկերի գնահատման հարցում:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Հանդիպման ընթացքում կազմակերպիչների կողմից ներկայացվեց, որ Ասիական զարգացման բանկը, բավականաչափ մեծ բյուջե է նախատեսել 2023 թվականի ընթացքում երկրների հարմարվողականության ծրագրերի իրականացման համար: Աշխատաժողովի մասնակից երկրները ներկայացրեցին կլիմայի հարմարվողականության առավել առաջնահերթ ոլորտները, երկրների առջև ծառացած մարտահրավերները, ծրագրերի իրականացման համար առկա բացերը:

ԱԶԲ ներկայացուցիչների հետ Քրիստինե Խաչատրյանը քննարկել է «Կլիման պարտքի դիմաց» գործընթացի շուրջ տեղեկատվության և փորձի փոխանակման հնարավորությունները, ինչի մասով պայմանավորվածություն ձեռք բերվեց մանրամասն ուսումնաիրել դաշտը և տրամադրել տեղեկատվություն:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչները հավաքագրելով աշխատաժողովին մասնակից երկրների կլիմայական ռիսկերի գնահատման, կլիմայի հարմարվողականության ծրագրերում ներդրումների իրականացման վերաբերյալ կարիքները, ընգծեցին, որ կուսումնասիրվի առկա բացերը կրճատելու և արդյունավետ լուծումներ առաջադրելու հնարավորությունները:

**Գործուղվող անձինք** **Ոսկեհատ Իսախանյան**
**Քրիստինե Խաչատրյան**

28.06.2023